**Արձանագրություն N 3**
**<< ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1>> ծածկագրով ընթացակարգի**
**գնահատման արդյունքների հաստատման նիստի**

ք. Երևան

04 դեկտեմբերի, 2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ — Ա. Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ

/ԳՊ/ԳԱ/ — Ա. Քյոսեյան

Քարտուղար՝ /ԳՊ/Միմ/ — Վ. Ղազարյան

Բացակայում էր՝ — Բ. Գևորգյանը

1. << **ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1**>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից սահմանված ժամկետում տեղեկատվություն չի ստացվել, սակայն սահմանված ժամկետից ուշ տրամադրված տեղեկատվությունից պարզ է դարձել, որ <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ-ն և <<Բի Լայն>> ՍՊԸ -ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

2. << **ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1**>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը արձանագրեց նաև, որ <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ-ի կողմից ապրանքի ամբողջական բնութագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, իսկ <<Բի Լայն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական բնութագրում կան անհամապատասխանություններ՝ 1, 4 չափաբաժինների մասով հղում չի արվել ապրանքի չօգտագործված լինելուն, ինչպես նաև 1-ին չափաբաժնում բացակայում էր մոնիտորի կետայնության և VGA տիպի մալուխի առկայության վերաբերյալ տվյալներ: Հանձնաժողովը որոշեց առաջարկել <<Բի Լայն>> ՍՊԸ-ին հրավերով սահմանված ժամկետում շտկելու անհամապատասխանությունը:

3. <<**ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1**>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց հանձնաժողովի հաջորդ նիստը նշանակել <<Բի Լայն>> ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված շտկման ժամկետում անհամապատասխանության շտկման հաջորդող աշխատանքային օրը:

**<< ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1>> ծածկագրով գնահատման արդյունքների հաստատման նիստի շարունակություն**

ք. Երևան

05 դեկտեմբերի, 2019թ.
ժամը՝ 10:00

4. Հանձնաժողովն արձանագրեց, որ <<Բի Լայն>> ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը:

5. Գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակիցներ ճանաչել <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ -ին՝ 2 չափաբաժնի մասով, <<Բի Լայն>> ՍՊԸ -ին՝ 1, 4 չափաբաժինների մասով:

6. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

7. Ընտրված մասնակիցների հետ գնման պայմանագրերը կկնքվեն անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ ______________________ Ա. Մարտիրոսյան

Անդամներ՝ ԳՊ/ԳԱ ______________________ Ա. Քյոսեյան

Քարտուղար՝ ԳՊ/Միմ ______________________ Վ. Ղազարյան